

ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ



ВЕСТНИК
МЕДИЦИНСКОГО КОЛЛЕДЖА
ИМ. МЕГРАБЯНА

BULLETIN
OF THE MEDICAL COLLEGE
AFTER MEHRABYAN

VOL. 15 TOM

ԵՂԵՎԱՆ 2023 YEREVAN



9 771829 040003



Dear Colleagues !

The Almaty Humanitarian and Economic University, the main scientific center of the republic, employs both doctors and candidates of sciences, as well as young researchers. Wisdom and experience, along with daring inquisitiveness, are a powerful engine of progress. Together they possess the true power of scientific thought, capable of discoveries and achievements.

Please accept my sincere words of gratitude and appreciation for your work and dedication to science. High professionalism, deep knowledge, rich practical experience allow you to preserve the best traditions of education, develop and promote science. It is your desire to achieve high scientific results, combined with a new approach to organizing research work, that will become the necessary impetus for the development of science.

I wish your magazine progressive prosperity, and the members of the editorial board success in their work and personal happiness!

*Sincerely, Valery Anatolyevich Korvyakov, Doctor of Economic Sciences,
Professor, Rector*

Kazakhstan, Almaty,
Almaty Humanitarian and Economic University

12/19/2023



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

ВЕСТНИК

МЕДИЦИНСКОГО КОЛЛЕДЖА

ИМЕНИ МЕГРАБЯНА

REPUBLIC OF ARMENIA

BULLETIN

OF THE MEDICAL COLLEGE

AFTER MEHRABYAN

VOL. 15 TOM

Изд-во «МЕКНАРК»
YEREVAN 2023 ЕРЕВАН

«ВЕСТНИК» выходит два раза в год на русском, английском и армянском языках. Все статьи печатаются под авторскую ответственность / «BULLETIN» is published two times per year in English, Russian and Armenian languages. All the articles are published under the author's responsibility / «ՏԵՂԵԿԱԳԻՐ»-ը տպագրվում է տարեկան երկու անգամ ռուսերեն, անգլերեն և հայերեն լեզուներով: Բոլոր հոդվածների պատասխանատվությունը կրում են հեղինակները

Печатается по решению Ученого Совета НТИЦ ОФХ НАН РА (от 13.02.2023г.)
Published by the decision of the Scientific Council of STC ОРНСН НАС РА (13.02.2023)
Տպագրվում է ՀՀ ԳԱԱ ՕՂՔ ԳՏԿ-ի գիտական խորհուրդի որոշմամբ (13.02.2023թ.-ի)

Печатается по решению Ученого и Редакционно-издательского Советов МКМ
Published by the decision of the Academic and Editorial & Publishing Councils of MCM
Տպագրվում է ՄԲԲ-ի գիտական և խմբագրական-հրատարակչական խորհուրդների որոշմամբ

«ВЕСТНИК» Медицинского колледжа имени Меграбяна является научно-информационным органом медицинского колледжа, в котором представлены теоретические и практические научно-образовательные монографии, статьи, работы и предложения армянских и иностранных ученых в сфере общественного здравоохранения и медицинского образования. Все статьи содержат ключевые слова, краткие аннотации на разных языках с целью облегченного доступа исследователей.

«BULLETIN» of the Medical College after Mehrabyan is the scientific and informational body of the Medical College, which presents theoretical and practical scientific and educational monographs, articles, works and proposals of Armenian and foreign scientists in the field of public health and medical education. All articles contain keywords, brief annotations in different languages for easy access by researchers.

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի «ՏԵՂԵԿԱԳԻՐ»-ը՝ բժշկական քոլեջի գիտական տեղեկատվական մարմինն է, որտեղ ներկայացվում են հանրային առողջապահության և բժշկական կրթության բնագավառներում հայ և օտարազգի գիտնականների տեսական և գործնական գիտակրթական մենագրությունները, հոդվածները, աշխատանքներն ու առաջարկությունները: Բոլոր հոդվածները պարունակում են հիմնաբառեր և կարճ տեքստեր տարբեր լեզուներով, նպատակ ունենալով թեթևացնել հետազոտողների օգտվելու հնարավորությունը:

«ВЕСТНИК» Медицинского колледжа имени Меграбяна // Научно-методический журнал, № 15 / Глав. ред. Пароникян Р.Г.; сост.: Акопян А.С.
– Ереван: Мекнарк, 2023. – 204 с.

«BULLETIN» of the Medical College after Mehrabyan, Scientific & Methodical Journal, No. 15; Editor in Chief: Paronikyan R.; comp.: Hakobyan A.
– Yerevan: Meknark, 2023. – 204 p.

Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի «ՏԵՂԵԿԱԳԻՐ» // Գիտամեթոդական ամսագիր, № 15 / Գլխ. խմբ.՝ Պարոնիկյան Ռ.Գ., կազմ.՝ Հակոբյան Ա.Ս.:
– Երևան՝ «Մեկնարկ», 2023: – 204 էջ:

ISSN 1829-040X

Журнал входит в eLIBRARY

DOI: [10.53821/1829040X](https://doi.org/10.53821/1829040X)

 ORCID: [0000-0001-9263-6791](https://orcid.org/0000-0001-9263-6791)

© *Медицинский колледж им. Меграбяна*
© *Medical College after Mehrabyan*
© *Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջ*

DOI: 10.53821/1829040X-2023.15-111

ՀՏԳ 615.12:614.27–615.45

**СРАВНИТЕЛЬНАЯ ХАРАКТЕРИСТИКА БЕСЕДЫ РАБОТНИКА АПТЕКИ
С ПОСЕТИТЕЛЕМ АПТЕКИ И КОНСУЛЬТАЦИИ ПРИ ОТПУСКЕ
АЛЛОПАТИЧЕСКИХ И ГОМЕОПАТИЧЕСКИХ ПРЕПАРАТОВ
(Обзор литературы)**

Анаит Гарегиновна Маилян

*Ассистент кафедры фармацевтического менеджмента,
Ереванский государственный медицинский университет им. Мх. Гераци,
г. Ереван, Республика Армения
amajiljan@mail.ru*

Научный руководитель – Э.С. Секоян

*Д.ф.н., профессор,
Ереванский государственный медицинский университет им. Мх. Гераци,
г. Ереван, Республика Армения*

Аннотация. Для того чтобы сотрудники аптеки могли правильно ориентировать покупателя аптеки при выборе препарата, они должны владеть определенной информацией о пациенте. Эта информация получается в ходе беседы с посетителем аптеки, на основании которого фармацевт принимает решение о выборе препарата, предлагает его пациенту, дает необходимую консультацию по выбранному препарату или, в зависимости от ситуации, советует обратиться к врачу.

Чтобы осуществить этот процесс на должном уровне и в кратчайшие сроки, в научной литературе предлагаются алгоритмы беседы сотрудников аптеки с клиентом аптеки при различных симптомах, подлежащих самолечению.

В работе проведен сравнительный анализ, выявлены особенности и отличия этих алгоритмов и консультирования при опуске гомеопатических и аллопатических препаратов (на примере самолечения при запорах).

При отпуске лекарственного средства предлагается внедрить алгоритм о предоставлении информации, который включает советы по приему и хранению лекарств, немедикаментозному лечению и диетическому регулированию. Советы по немедикаментозному лечению, регулированию питания очень ценны, так как снижают лекарственную нагрузку на организм.

Исследования в этом направлении продолжаются, так как создание таких комплексных алгоритмов для каждого симптома более чем необходимо в соответствии с распространенностью и приоритетом симптома.

Ключевые слова: покупатель аптеки, симптом, алгоритм, гомеопатические лекарства, консультирование.

**COMPARATIVE CHARACTERISTICS OF THE PROCEDURE
OF THE CONVERSATION OF THE PHARMACY EMPLOYEE
WITH THE CUSTOMER OF THE PHARMACY AND THE CONSULTATION**

**WHEN DISPENSING ALLOPATHIC AND HOMEOPATHIC MEDICINES
(Referential analysis)**

Mailyan Anahit

*Assistant of the Department of Pharmaceutical Management,
Yerevan State Medical University after Mk. Heratsi,
Yerevan, Republic of Armenia
amajiljan@mail.ru*

Scientific supervisor – Sekoyan E.

*MD, PhD, Doctor of Pharmaceutical Sciences, Professor,
Yerevan State Medical University after Mk. Heratsi,
Yerevan, Republic of Armenia*

Abstract. In order for pharmacy employees to correctly guide the pharmacy customers when choosing a medicine, they must have certain information about the patient.

This information is obtained during a conversation with a pharmacy customer which enables the pharmacist to make a decision on choosing a drug, offer it to the patient, give the necessary advice on the chosen medicine, or, depending on the situation, advise seeing a doctor.

In order to carry out this process at the proper level and in the possible shortest period of time, the scientific literature proposes algorithms for conversations between the pharmacy employees and a pharmacy customer for various symptoms that are subject to self-medication.

The given study carried out a comparative analysis, identifying the peculiarities and differences of these algorithms and counseling when dispensing the homeopathic and allopathic medications (using the example of self-medication for constipation).

As a result, it was suggested to apply a procedure or algorithm of providing information when dispensing a medicine, which includes advice on taking and storing medicines, the way of use, non-drug treatment and dietary regulation. Advice on the non-drug treatment and dietary regulation is very valuable, as it reduces the drug load on the body.

Research in this direction is ongoing, since it is more than necessary to creation such complex and comprehensive algorithms for each symptom in accordance with the prevalence and priority of the symptom.

Keywords: *pharmacy customer, symptom, algorithm, homeopathic medicines, counseling.*

**ԴԵՂԱՏԱՆ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՀԵՏ ԴԵՂԱՏԱՆ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԶՐՈՒՅՑԻ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ
ԱԼՈՊԱԹԱՅԻՆ ԵՎ ՀՈՄԵՈՊԱԹԱՅԻՆ ԴԵՂԵՐ ԲԱՑ ԹՈՂՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ
(Գրականության վերլուծություն)**

Անահիտ Գարեգինի Մաիլյան

*Դեղագործության կառավարման ամբիոնի ասիստենտ,
Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարան,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
amajiljan@mail.ru*

Գիտական ղեկավար՝ Է.Ս. Սեկոյան

*Բ.գ.դ., պրոֆեսոր,
Մ. Հերացու անվ. Երևանի պետական բժշկական համալսարան,
ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն*

Ամփոփագիր: Որպեսզի դեղատան աշխատակիցները ճիշտ կողմնորոշեն դեղատան հաճախորդին դեղի ընտրության հարցում, նրանք պետք է տիրապետեն որոշակի ինֆորմացիայի: Այդ ինֆորմացիան ձեռք է բերվում դեղատան հաճախորդի հետ զրույցի ընթացքում, որի վերլուծության հիման վրա դեղագետը ընտրում է համապատասխան դեղը և առաջարկում այն դեղատան հաճախորդին ապահովելով նաև անհրաժեշտ խորհրդատվություն ընտրված դեղի վերաբերյալ կամ ելնելով իրավիճակից խորհուրդ է տալիս դիմել բժշկի: Այս գործընթացը պատշաճ մակարդակով և հնարավորինս սեղմ ժամկետում կատարելու համար գիտական գրականության մեջ առաջարկվում են դեղատան հաճախորդի հետ դեղատան աշխատակիցների զրույցի ընթացակարգեր տարբեր ախտանիշների դեպքում, որոնք ենթակա են ինքնաբուժման:

Սույն աշխատանքում իրականացվել է համեմատական վերլուծություն, բացահայտվել են դեղատան հաճախորդի հետ դեղատան աշխատակցի զրույցի ընթացակարգի և ընդհանրապես առանց դեղատոմսի բաց թողնվող դեղերի իրացման ժամանակ տրամադրվող խորհրդատվության առանձնահատկությունները և նշվել են դրանց տարբերությունները հոմեոպատիան և ալոպատիան դեղեր բաց թողնելու պարագայում (փորկապության ախտանիշի օրինակով):

Արդյունքում առաջարկվել է կիրառել նաև դեղը բաց թողնելիս հաղորդվող տեղեկատվության համար նախատեսված ընթացակարգ, որը ներառում է դեղի պահպանման, օգտագործման ձևի, ոչ դեղորայքային բուժման, սննդային կարգավորման վերաբերյալ խորհուրդներ: Ոչ դեղորայքային բուժման, սննդային կարգավորման վերաբերյալ խորհուրդները շատ արժեքավոր են, քանի որ փոքրացնում են օրգանիզմի դեղորայքային ծանրաբեռնվածությունը:

Հետազոտությունները այս ուղղությամբ շարունակական են, քանի որ ավելի քան անհրաժեշտ է ստեղծել նման համապարփակ ընթացակարգեր յուրաքանչյուր ախտանիշի դեպքում՝ ըստ ախտանիշի տարածվածության և առաջնահերթության:

Հիմնաբառեր՝ *դեղատան հաճախորդ, ախտանիշ, ընթացակարգ, բազմաբաղադրատարր հոմեոպատիան դեղեր, խորհրդատվություն:*

Արդիականությունը. Դեղագործական շուկան սպառողական ապրանքների ամենահեռանկարային և դինամիկ զարգացող շուկաներից մեկն է: Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում առանց դեղատոմսի դուրս գրվող դեղերի շուկան [17]: Այս պատրաստուկները (պրեպարատները) լայնորեն կիրառվում են ինքնաբուժման գործընթացում: Աշխարհում ժամանակակից միտումները ցույց են տալիս, որ առողջապահական համակարգում պատասխանատու ինքնաբուժման դերն անշեղորեն աճում է [26: 44–45]:

Առողջապահության ծախսերը նվազեցնելու համար եվրոպական երկրների կառավարությունների ձեռնարկած միջոցառումները հանգեցրեցին նրան, որ բժշկի պատականությունների մի մասն աստիճանաբար փոխանցվեց դեղագետին/դեղագործին: Եվ սա պատահական չէր: Ուսումնառության գործընթացում դեղատան աշխատակիցը ձեռք է բերում մասնագիտական գիտելիքներ դեղերի մասին և նաև որակավորում,

որոնք թույլ են տալիս նրան սպառողին մատուցել դեղերի օգտագործման վերաբերյալ խորհրդատվություն՝ ելնելով համապատասխան ախտանիշների առկայությունից: Նա կարող է բացատրել, թե որ ախտանիշների դեպքում կարող է սպառողը ինքնուրույն դեղեր ընդունել, և որ դեպքերում է անհրաժեշտ դիմել բժշկի: Գովազդը, դեղագետ/դեղագործի խորհուրդը, ինչպես նաև ներդիր-թերթիկը, լրացնելով մեկը մյուսին, ամբողջական պատկերացում են տալիս սպառողին՝ դեղի ցուցումների և ինքնուրույն կիրառման վերաբերյալ [19: 360]:

Դեղաբուժության ժամանակակից ձեռքբերումները հանգեցնում են դրական արդյունքների ոչ միայն ամենատարածված հիվանդությունների դեմ պայքարում, այլ նաև դեղորայքային հիվանդությունների՝ դեղորայքային ալերգիայի և հակաբիոտիկների նկատմամբ կայուն միկրոօրգանիզմների շտամների առաջացման դեմ պայքարում: Նման իրավիճակում անվտանգ բուժման եղանակների որոնումը կենսական անհրաժեշտություն է դառնում հատկապես դեղորայքային անտանելիությամբ տառապող մարդկանց համար: Այդպիսի այլընտրանքային բուժման մեթոդներից մեկը հոմեոպատիան է: Ավելի քան երկու հարյուր տարի հայտնի այս մեթոդը լուծում է «ճիշտ, անվտանգ, արագ և հուսալի բուժելու» խնդիրը՝ կենսատեղեկատվական (բիոինֆորմատիկ) մակարդակում գործող բուժիչ նյութերի ծայրահեղ ցածր չափաբաժիններով [21]:

Հոմեոպատիայի սկզբունքներն առաջին անգամ ներդրվել են 1796 թվականին Սամուել Հանեմանի կողմից [2: 391–439, 465–561]:

Հոմեոպատիայի հիմնական դրույթներից մեկը «*similia similibus curentur*»-ն է (նմանը բուժվում է նմանով), այսինքն՝ նմանության սկզբունքը. միացությունները, որոնք կարող են առաջացնել ախտանիշներ (բարձր չափաբաժիններով), կարող են բուժել նմանատիպ ախտանիշներով հիվանդություն, երբ օգտագործվում են ցածր չափաբաժիններով: Հարկ է նշել, որ նմանության սկզբունքը լայնորեն կիրառվում է բժշկության մեջ (օրինակ՝ պատվաստանյութերով թերապիայի ժամանակ), իսկ հիվանդի անհատական առանձնահատկությունները հաշվի առնելն այժմ արդիական է բոլոր ժամանակակից բժշկական գիտությունների համար, հատկապես բարդ և դժվար բուժելի հիվանդությունների դեպքում [1: 342–348; 15: 549–550]:

Հոմեոպատիայի հայտնագործումով բժշկության մեջ առաջացավ երկու ուղղություն.

- ❖ Հոմեոպատիային բժշկություն (հունարեն «*homoios*» – «նման»)

❖ Ալոպաթային բժշկություն (հունարեն «Allon» – «ուրիշ») [7]:

Ժամանակակից կլինիկական հետազոտությունների արդյունքներն ապացուցում են հոմեոպաթային դեղերի բարձր արդյունավետությունն ու անվտանգությունը, ինչը բժիշկների կողմից մեծ հետաքրքրություն է առաջացնում դրանց նկատմամբ [22: 13–15; 25]:

Հոմեոպաթային բուժման հաջողություններն անկասկած են: Հոմեոպաթային դեղերը չեն առաջացնում կողմնակի ազդեցություններ և ալերգիկ ռեակցիաներ, չեն վնասում հիվանդին [8: 15; 15: 549–550; 20]:

Անհնար է բացատրել հոմեոպաթային բուժման հաջողությունները միայն հոգեթերապևտիկ ազդեցությամբ, քանի որ դրանք նշվել են և՛ երեխաների, և՛ անասնաբուժական պրակտիկայում, և՛ փորձարարական կենդանիների վրա իրականացված փորձերի ժամանակ [6; 9: 176–181; 10; 13]:

Հոմեոպաթային բազմաբաղադրատարր դեղերը նշանակվում են հիմնականում ալոպաթ բժիշկների կողմից: Այս դեղերը նշանակվում են սիմպտոմատիկ: Հոմեոպաթային համալիրները (կոմպլեքսները), որպես կանոն, դասակարգվում են որպես առանց դեղատոմսի բաց թողնվող դեղեր, ուստի դրանք կարող են նշանակվել նաև այն բժիշկների կողմից, ովքեր չունեն հոմեոպաթային մեթոդով բուժման հատուկ մասնագիտացում:

Հնդկաստանում բժիշկների մոտ 50%-ն իրենց պրակտիկայում օգտագործում են հոմեոպաթային դեղեր, Մեծ Բրիտանիայում՝ 40%-ը, Ֆրանսիայում՝ 32%-ը, Գերմանիայում՝ 25%-ը, Ավստրիայում՝ 22%-ը [14: 208; 16: 218; 18: 13]:

Քանի որ բազմաբաղադրատարր հոմեոպաթային դեղերն առանց դեղատոմսի բաց թողնվող դեղեր են, դրանք կարող են առաջարկվել նաև դեղատան աշխատակիցների կողմից:

Առանց դեղատոմսի դուրս գրվող դեղերը հիմնականում օգտագործվում են հեշտ բուժելի վիճակների բուժման համար, որոնք չեն պահանջում բժշկական միջամտություն: Դրանց կիրառման հիմնական նպատակն է արագ և արդյունավետ կերպով մեղմել այն հիվանդությունների ախտանիշները, որոնք բժշկական խորհրդատվություն չեն պահանջում [24]:

Շարունակվող անբարենպաստ ախտանիշների առկայության դեպքում, ինչպես նաև «սպառնացող» ախտանշանների բացահայտման պայմաններում, շատ կարևոր է հիվանդին համոզել բժշկի հետ խորհրդակցելու անհրաժեշտության մեջ: Մեծ նշանակություն ունի նաև դեղատան հաճախորդի համար դեղերի մասին մատչելի տեղեկատվություն տրամադրելու կարողությունը [23]:

Որպեսզի դեղատան աշխատակիցը սեղմ ժամկետում կարողանա պարզաբանել այն հիմնական հարցերը, որոնք հնարավորություն կտան կողմնորոշվել կամ դեղի ընտրության կամ հիվանդին բժշկական խորհրդատվության ուղղորդելու հարցում, գիտական գրականության մեջ բերված են դեղատան հաճախորդի հետ զրույցի տարբեր ընթացակարգեր [17]:

ՀՀ-ում այսպիսի ընթացակարգեր դեռևս չկան, և դա լրջագույն խնդիր է, հատկապես բազմաբաղադրատարր հումեոպատային դեղերի բաց թողնման պարագայում, քանի որ դեղատան աշխատակիցների տեղեկացվածությունն այս ասպարեզում շատ ցածր մակարդակի վրա է՝ այս դեղերի առանձնահատկությունների (դեղի ընդունման, պահպանման, արդյունավետության, կողմնակի ազդեցությունների և ալերգիկ ռեակցիաների բացակայության) վերաբերյալ:

Սույն ուսումնասիրության նպատակն է տալ փորկապության ախտանիշի օրինակով դեղատան աշխատակիցների կողմից հումեոպատային և ալոպատային դեղերով իրականացվող տեղեկատվա – խորհրդատվական գործառույթի համեմատական բնութագիրը, ինչպես նաև առաջարկել հումեոպատային դեղի բաց թողնման պահին տրվող խորհրդատվության ընթացակարգ՝ ներառյալ դեղի պահպանումը, օգտագործման ձևը, ոչ դեղորայքային բուժման խորհուրդները և այլն:

Նյութը և մեթոդները

Ուսումնասիրության նյութ են հանդիսացել հիմնախնդրին վերաբերվող մասնագիտական գրականությունը և ոլորտի հետ առնչվող ՀՀ օրենսդրական դաշտը: Կատարվել է այդ տվյալների համակողմանի վերլուծություն, իրականացվել է հումեոպատային և ալոպատային մեթոդներով բուժման պարագայում ընթացակարգերի համադրում և ուսումնասիրության արդյունքների վրա արվել են առաջարկություններ:

Արդյունքները և քննարկումը

Հումեոպատիան օգտագործվում է ինքնաբուժման կառավարման տարբեր իրավիճակներում: Աղյուսակ 1-ում ներկայացված է այն ախտանիշների ցանկը, որոնց

դեպքում հաճախ են դիմում ինքնաբուժման (ալոպաթային և հոմեոպաթային դեղերով) [3, 7]:

Աղյուսակ 1

Ախտանիշների ցանկ, որոնց դեպքում հաճախ են դիմում ինքնաբուժման (ալոպաթային և հոմեոպաթային դեղերով)

Ախտանիշների ցանկ, որոնց դեպքում հաճախ են դիմում ինքնաբուժման (ալոպաթային դեղերով)	Սուր ֆիզիկական և էմոցիոնալ վիճակներ, որոնց դեպքում հաճախ են դիմում ինքնաբուժման (հոմեոպաթային դեղերով)
<ul style="list-style-type: none"> • Գլխացավ, • Հազ, • Մրսածություն, • Հարբուխ, • Բարձր ջերմություն, • Ալերգիա, • Ընդհանուր անհանգստություն, • Թերվիտամինոզ • Հոդացավ, • Ցավ կոկորդում, • Ականջացավ, • Մեջքացավ, • Հոգնածություն, • Աչքերի հոգնածություն, • Փորլուծություն, • Անքնություն, • Հերպես, • Փորկապություն, • Այրոցի զգացում ստամոքսում, • Թուրք, • Ցրտահարություն, • Ճճվակրություն, • Ոջլոտություն, • Այրվածք • Ծովային հիվանդություն 	<ul style="list-style-type: none"> • Ալերգիկ ռինիտ • Սթրես և անհանգստություն • Ընդհանուր մրսածություն • Ցավ կոկորդում, • Գրիպի ախտանշաններ • Հետվիրահատական ցավ, այտուց և կապտուկ • Ծովային հիվանդություն, սրտխառնոց • Անքնություն • Նախադաշտանային սինդրոմ • Մարսողական անհարմարություն • Գորտնուկներ • Կոնյուկտիվիտ • Միջատների խայթոց • Թեթև արևահարություն • Մաշկի թեթև բորբոքում • Մկանացավ և հոդացավ • Կապանների, հողերի ձգվածություն և թեթև վնասվածքներ

Համեմատությունը ցույց է տալիս, որ առանձնապես մեծ տարբերություն չկա ախտանիշների ցանկում: Դեղատան աշխատակիցները կարող են առաջարկել և՛ ալոպաթային, և՛ հոմեոպաթային առանց դեղատոմսի բաց թողնվող դեղեր՝ ապահովելով դեղատան հաճախորդին լիարժեք և անկողմնակալ տեղեկատվությամբ այդ դեղերի մասին, իսկ հաճախորդն ինքը կկողմնորոշվի, թե որ դեղն է նախընտրում:

Հետագա համեմատական վերլուծության համար ախտանիշների շարքից ընտրվել է փորկապությունը՝ նկատի ունենալով հիմնախնդրի տարածվածությունը.

- Աշխարհի բնակչության 12%-ի մոտ հանդիպում է փորկապություն:
- Փորկապության հետ կապված առողջապահական ծախսերը ԱՄՆ-ում տարեկան կազմում են 6,9 միլիարդ ԱՄՆ դոլար:
- Ջարգացած երկրներում փորկապությամբ տառապում է աշխատունակ բնակչության 30–50 %-ը:
- Երեխաների 5–20 %-ը տառապում է փորկապությամբ:
- Տարեցների մոտ այն հանդիպում է 5 անգամ ավելի հաճախ, քան երիտասարդների մոտ:
- Ծերանոցներում ապրող տարեցների մոտ փորկապության տարածվածությունը 50–75 % է [4; 11: 917–930]:

Փորկապությամբ տառապող հիվանդների կլինիկական պատկերը միանման է: Նրանք ունեն հետևյալ հիմնական գանգատները [12].

- գերհոգնածություն,
- համի փոփոխություն,
- պատռող ցավի զգացողություն որովայնում,
- որովայնի բուժ ցավ՝ գազերի կուտակման պատճառով,
- դեֆեկացիայի անօգուտ ճիգեր, երբեմն շատ քիչ կղանքի արտաթորմամբ, որը չի թեթևացնում հիվանդի վիճակը,
- բարդություններ անոռեկտալ հատվածում,
- լեղուղիների պաթոլոգիա,
- կարծր կղանքային զանգվածներ,
- լարված և երկարատև կղազատում և այլն:


Այսպիսի իրավիճակներում դեղատան աշխատակիցը ճիշտ խորհրդատվություն ապահովելու համար պետք է տիրապետի որոշակի տեղեկատվության: Որպեսզի կարճ ժամանակում, իր աշխատանքային ծանրաբեռնվածության պայմաններում արագ ստանա որոշում կայացնելու համար անհրաժեշտ տվյալներ, առաջարկվում է դեղատան հաճախորդի հետ դեղագետի/դեղագործի զրույցի ընթացակարգ:

Գոյություն ունեն դեղատան հաճախորդի հետ դեղատան աշխատակցի զրույցի տարբեր ընթացակարգեր: Ստորև ներկայացված են այդպիսի ընթացակարգեր փոր-

կապության ախտանիշի վերաբերյալ՝ ալոպաթային (Տես՝ Աղյուսակ 2) և հոմեոպաթային դեղերով (Տես՝ Աղյուսակ 3) խորհրդատվության դեպքում [5, 17]:

Աղյուսակ 2

Դեղատան հաճախորդի հետ դեղագետի զրույցի ընթացակարգ ալոպաթային դեղեր առաջարկելիս



Դեղատան հաճախորդի հետ դեղագետի/դեղագործի գրույցի ընթացակարգ համալիր հոմեոպատային դեղեր առաջարկելիս

Փորկապու- թյան տե- սակը	Ընդհանուր պրոբլեմներ	Վիճակի վատացում	Վիճակի լավացում	Դեղի անվանումը
Փորկապու- թյուն մեծ լարվածու- թյամբ, բայց քիչ արտա- թորմամբ	<ul style="list-style-type: none"> • Ընտրված դեղը օգտակար է մետեորիզմով ուղեկցվող փորկապուրթյամբ, երբ կղանքի շարժունակությունը լիարժեք չէ • Նաև օգտակար է, երբ փորկապուրթյունը վատ սնվելու հետևանք է 	<ul style="list-style-type: none"> • Հպումից • Շարժումից • Քնելուց հետո 	<ul style="list-style-type: none"> • Հանգստից • Երեկոյան • Որովայնի ուժեղ մերսումից 	Դեղը ընտրվում է համաձայն նկարագրված իրավիճակի
Համառ փորկապու- թյուն առանց բավականա չափ ջուր խմելու: Ամբողջու- թյամբ բա- ցակայում է արտաթորե լու ցանկու- թյունը	<ul style="list-style-type: none"> • Աղիների շարժունակությունը շատ դժվար է, կղանքը չոր է և դժվար է տեղաշարժվում • Փորկապուրթյունն ուղեկցվում է ուժեղ գլխացավով (ոչ շատ ջրագրկման պատճառով) 	<ul style="list-style-type: none"> • Շարժումից • Ջրի պակասից • Ցանկացած բնույթի տաքությունից 	<ul style="list-style-type: none"> • Մառը խմելուց • Հանգստից և հնարավորինս անշարժ մնալուց • Ուժեղ մերսումից և սեղմելուց 	Դեղը ընտրվում է համաձայն նկարագրված իրավիճակի
Փորկապու- թյուն, որ օրվա ռեժի- մը խախտե- լու հետևանք է	<ul style="list-style-type: none"> • Փորկապուրթյուն, որ առաջանում է ճամփորդելիս • Աղիների փոփոխական վիճակից՝ կապված լուծողականների չարաշահման հետ, որի հետևանքով հաջորդում են փորկապուրթյունը և լուծը 	<ul style="list-style-type: none"> • Սթրեսից • Մառը ուտելիքից և խմիչքից • Անհանգիստ վիճակից • Գոտկատեղի շրջանում սեղմ հագուստից 	<ul style="list-style-type: none"> • Մեղմ շարժումից • Ազատ, հարմար հագուստից • Տաք ուտելիքից և խմիչքից 	Դեղը ընտրվում է համաձայն նկարագրված իրավիճակի

<p>Փորկապություն փափուկ կղանքով</p>	<p>Փորկապություն աղիների թուլությամբ – որպես արդյունք լարվածություն և նույնիսկ արյունահոսություն, երբ փորձում է արտաթորել:</p>	<ul style="list-style-type: none"> • Օսլայի մեծ և բջջանյութի քիչ պարունակությամբ սննդից • Շարժումների պակասից 	<ul style="list-style-type: none"> • Բջջանյութով հարուստ սնունդ ընդունելուց • Տաք ուտելիքից և խմիչքից 	<p>Դեղը ընտրվում է համաձայն նկարագրված իրավիճակի</p>
---	--	---	---	--

Ինչպես ցույց է տալիս երկու աղյուսակների տվյալների համեմատական ուսումնասիրությունը, արմատական տարբերություն կա դեղատան աշխատակցի կողմից ալոպաթային և հոմեոպաթային դեղի ընտրության ժամանակ հաճախորդի հետ պարզաբանում պահանջող հարցերում: Հետևաբար դեղագետը/դեղագործը պետք է հիմնավոր գիտելիքներ ունենա և՛ ալոպաթային, և՛ հոմեոպաթային դեղերի վերաբերյալ, որպեսզի վստահություն ներշնչի և ճիշտ կողմնորոշի հաճախորդին դեղի ընտրության հարցում, իսկ անհրաժեշտության դեպքում՝ խորհուրդ տա դիմել բժշկի:

Փորկապության բուժումը համալիր մոտեցում է պահանջում: Առաջին հերթին անհրաժեշտ է պարզել արտաթորման խանգարումների պատճառը, հատկապես սուր դեպքերի ժամանակ: Այս պարագայում դեղատանը ալոպաթային դեղերից խորհուրդ են տալիս լուծողական միջոցներ (օր. ԱՄՆ-ում տարեկան ծախսվում են 725 մլն դոլարի լուծողական միջոցներ):

Այս դեղերը կտրականապես հակացուցված և անարդյունավետ են աղիքային անանցանելիության դեպքում (ուռուցքներ, պոլիպներ) [17]:

Երկու մեթոդով բուժման ժամանակ էլ պետք է խորհուրդ տալ անհապաղ դիմել բժշկի, եթե պացիենտի մոտ առկա են որովայնում ուժեղ ցավեր կծկող (սպաստիկ) բնույթի, արյունահոսություն ուղիղ աղիքից, փսխում, բարձր ջերմություն և այլն (Տես՝ Աղյուսակ 4):

Երկու մեթոդով բուժման դեպքում էլ դեղատան աշխատակիցը պետք է դեղը բաց թողնելուց հետո խորհուրդներ տա դեղերի կիրառման և պահպանման վերաբերյալ [27]:

Սակայն պետք է հատուկ ուշադրություն դարձնել հոմեոպաթային դեղեր բաց թողնելիս տրվող խորհրդատվությանը, քանի որ այն խիստ տարբերվում է մյուս դեղերի բաց թողնման ժամանակ հաղորդվող տեղեկատվությունից: Բացի դեղորայքային

միջամտությունից կարելի է կանխարգելմանը և բուժմանը նպաստող խորհուրդներ տալ և որպես ոչ դեղորայքային միջամտություն առաջարկել նաև սննդային կարգավորում [17], ըստ որի խորհուրդ է տրվում կիրառել սնունդ, որը նպաստում է աղիների դատարկվելուն և սննդակարգից բացառել փորկապությանը նպաստող սննդատեսակները (Տես՝ Աղյուսակ 4):

Այսպիսի ոչ դեղորայքային միջամտությունների կիրառումը և՛ ալոպաթային, և՛ հոմեոպաթային դեղեր առաջարկելիս հնարավորություն են տալիս փոքրացնել օրգանիզմի դեղորայքային ծանրաբեռնվածությունը՝ նպաստելով կանխարգելմանը և բուժմանը:

Ընդհանրացնելով վերլուծության արդյունքները՝ մշակվել է ընտրված ալոպաթային և հոմեոպաթային դեղերի բաց թողնման ժամանակ դեղատան աշխատակցի կողմից տրվող տեղեկատվության ընթացակարգ (Տես՝ Աղյուսակ 4):

Աղյուսակ 4

Ընտրված դեղի բաց թողնման ժամանակ դեղատան աշխատակցի կողմից տրվող տեղեկատվության ընթացակարգ՝ հոմեոպաթային և ալոպաթային դեղեր առաջարկելիս

Տեղեկատվության տեսակը		
Խորհրդատվություն	Հոմեոպաթային դեղեր առաջարկելիս	Ալոպաթային դեղեր առաջարկելիս
1	2	3
Օգտագործման ձևը	Հոմեոպաթային բուժման ողջ ընթացքում հիվանդին արգելվում է սուրճ խմել, մեծ քանակությամբ ալկոհոլ օգտագործել, հակաբիոտիկներ, հորմոններ ընդունել և հորմոնալ քսուքներ օգտագործել: Չի կարելի օգտագործել հոմեոպաթային դեղեր, կամֆորա և վաղենակ քսուքների և թրջոցների ձևով, կատարել ատամնաբուժական անզգայացում: Անանուխի թուրմը կարող է նվազեցնել հոմեոպաթային դեղերի ազդեցությունը: Դեղը պետք է ընդունել 2 սննդի ընդունումների միջև ընկած ժամանակահատվածում՝ ուտելուց, խմելուց, ծխախոտից, ատամի մածուկ, մաստակ կամ քաղցրա-	Համաձայն ընտրված դեղի

	վենիք օգտագործելուց կես ժամ առաջ կամ հետո	
Պահպանումը	Հոմեոպատիան պրեպարատները պետք է պահել խիստ հոտավետ նյութերից հեռու, ինչպիսիք են կամֆորան, անանուխը, օծանելիքը, ներկը, ճաշի հոտը (ոչ խոհանոցում, ոչ սառնարանում) և այլն, ոչ բարձր ջերմաստիճանում, արևի ուղիղ ճառագայթներից հեռու, էլեկտրական սարքերից, բջջային հեռախոսներից և ռենտգենյան ճառագայթումից հեռու (օրինակ՝ օդանավակայաններում ուղեբեռի զննման ժամանակ):	Համաձայն ընտրված դեղի
Փորկապության կանխարգելմանը և բուժմանը նպաստելու համար	<ul style="list-style-type: none"> • Եթե հիվանդի մոտ չկան հակացուցումներ (սրտի հիվանդություններ, այտուցներ), ապա հիվանդին պետք է խորհուրդ տալ, որ խմի օրական 1,5–2լ հեղուկ: Բավարար քանակի հեղուկի ընդունումը օգտակար է, քանի որ կղանքային զանգվածի դանդաղ տեղաշարժի դեպքում այն «չորանում է», որը դժվարեցնում է շարժը հաստ աղիքում: • Կարևոր է սնման ռեժիմի ճիշտ պահպանումը: Օգտակար է սնունդ ընդունել օրը 5 անգամից ոչ պակաս: • Ցուցված են նաև հանքային ջրեր: Որովայնում ցավերի դեպքում գերադասելի է տաք հանքային ջրերի ընդունումը: 	Նույն տեղեկատվությունը, ինչ հոմեոպատիան դեղ բաց թողնելիս
Մանդային կարգավորում՝ 1. Փորկապությանը նպաստող սննդատեսակներով	<ul style="list-style-type: none"> • սպիտակ հաց, • յուղոտ միս և ձուկ, • ապխտած միս, • շոկոլատ, սուրճ, թունդ թեյ, կակաո, • կարտոֆիլ, բրինձ • հաղարջ • կարմիր գինի և այլն 	Նույն տեղեկատվությունը, ինչ հոմեոպատիան դեղ բաց թողնելիս
Մանդային կարգավորում՝ 2. Աղիների դատարկվելուն նպաստող սննդատեսակներով	<ul style="list-style-type: none"> • բջջանյութով հարուստ մթերք՝ ճակնդեղ, դդում, լոլիկ • տարեկանի ալյուրից հաց, • հաց, որը թեփ է պարունակում, • հնդկաձավար, վարսակ, • անյուղ միս, ձուկ, • միրգ • կաթնամթերք (թթվասեր, սերուցք, մածուն և այլն) 	Նույն տեղեկատվությունը, ինչ հոմեոպատիան դեղ բաց թողնելիս

	<ul style="list-style-type: none"> • ոչ ոգելից խմիչք (հանքային ջրեր, լիմոնադ, հյութեր), գարեջուր, կվաս) • սպիտակ խաղողի գինի և այլն: 	
Խորհուրդ տալ անհապաղ դիմել բժշկի, եթե պացիենտի մոտ առկա է	<ul style="list-style-type: none"> • որովայնում ուժեղ ցավեր կծկող (սպաստիկ) բնույթի, • սրտխառնոց, փսխում, որովայնի փքվածություն, • բարձր ջերմություն, • արյունահոսություն ուղիղ աղիքից 	Նույն տեղեկատվությունը, ինչ հոմեոպաթային դեղ բաց թողնելիս

Այսպիսով, կարելի է փաստել, որ խիստ անհրաժեշտություն կա տեղեկատվական բազա ստեղծել ինքնաբուժման ենթակա յուրաքանչյուր ախտանիշի դեպքում, որը կներառի.

➤ դեղատան հաճախորդի հետ դեղատան աշխատակցի գրույցի ընթացակարգ, որի նպատակն է ունենալ հիմնական հարցերի խումբ, որն անհրաժեշտ է պարզել ճիշտ խորհրդատվության համար ինքնաբուժման ենթակա յուրաքանչյուր ախտանիշի դեպքում:

➤ դեղի բաց թողնման ժամանակ տրամադրվող տեղեկատվության ընթացակարգ, որի նպատակն է տալ խորհրդատվություն դեղի օգտագործման և պահպանման կարգի, սննդային ռեժիմի, ոչ դեղորայքային բուժման վերաբերյալ:

Նման տեղեկատվական բազա ստեղծելու նպատակն է, որ և՛ նորավարտ, և՛ փորձառու մասնագետը հնարավորություն ունենա բարձր մակարդակով իրականացնել դեղատան աշխատակիցների ամենակարևոր խորհրդա – տեղեկատվական գործառույթը՝ կրկին շեշտը դնելով հոմեոպաթային դեղերի վերաբերյալ խորհրդատվությանը, որպես առավել պակաս տեղեկացված ոլորտի: Առաջարկվող երկրորդ ընթացակարգը, որը ներառում է նաև սննդային ռեժիմի, ոչ դեղորայքային բուժման վերաբերյալ խորհուրդներ, կնպաստի լուծել ևս մեկ կարևոր խնդիր՝ փոքրացնել օրգանիզմի դեղորայքային խնդիրը:

Եզրակացություններ

Գիտական գրականության ուսումնասիրության և Հայաստանի հանրապետությունում իրավիճակի վերլուծությունից կարելի է փաստել, որ գնալով աճում է դեղատան աշխատակիցների խորհրդատվա – տեղեկատվական գործառույթի իրականացման դերը: Եվ որպեսզի այդ ծառայությունը մատուցվի պատշաճ մակարդակով, դեղագետ/դեղագործները պետք է տիրապետեն դեղատանը առկա բոլոր տեսակի դեղե-

րի վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքների: Այդ տեղեկատվությունը պետք է լիարժեք, ճշգրիտ ու տեղին լինի, հետևաբար դեղատան աշխատակիցը պետք է տիրապետի որոշ տեղեկատվության, որը նա ձեռք է բերում դեղատան հաճախորդի հետ զրույցի ընթացքում:

Որպեսզի իր ծանրաբեռնված աշխատանքի ընթացքում դեղագետ/դեղագործը ճշգրիտ և սպառիչ տեղեկատվություն ստանա դեղի ընտրության հարցում կողմնորոշվելու կամ եթե իրավիճակն այդ է թելադրում պացիենտին ուղղորդելու դիմել բժշկի, ստեղծվել են դեղատան հաճախորդի հետ զրույցելու ընթացակարգեր: Համեմատելով ընթացակարգերը, որոնք առաջարկվում են հոմեոպաթային և ալոպաթային դեղեր ընտրելիս, կարելի է եզրակացնել, որ կան արմատական տարբերություններ.

- այդ ալգորիթմերի համաձայն պարզաբանվող հարցերի միջև, և դա պետք է հաշվի առնել դեղի ընտրության մեջ կողմնորոշվելու ժամանակ
- դեղը բաց թողնելու ժամանակ տրվող խորհրդատվության դեպքում՝ կապված դեղի օգտագործման և պահպանման հետ:

Սակայն չկան առանձնապես մեծ տարբերություններ հիվանդին բժշկի դիմելու ուղղորդելու և ոչ դեղորայքային միջոցառումների հետ կապված տեղեկատվության դեպքում:

Ուսումնասիրության արդյունքներից կարելի է եզրակացնել նաև, որ անհրաժեշտություն կա տեղեկատվական բազա ստեղծել ավելի հաճախ հանդիպող ինքնաբուժման ենթակա ախտանիշների համար, որը պետք է ներառի.

- դեղատան հաճախորդի հետ դեղատան աշխատակցի զրույցի ընթացակարգ,
- դեղի բաց թողնման ժամանակ տրամադրվող տեղեկատվության ընթացակարգ:

ЛИТЕРАТУРА

1. *Dooley T.R.* Homeopathy // In “The Encyclopedia Americana”, in 30 volumes. – New York, Chicago: Americana corporation. Vol. XIV, 1944 [copyright 1918, 1920, 1922, 1924, 1927, 1929, 1931, 1932, 1936–1943]. – PP. 342–348.
2. *Hahnemann S.* Essay on a new principle for ascertaining the curative powers of drugs, together with perspectives on the existing principles // C.W. Hufelands Journal der practischen Arzneykunde und der Wundarzneykunst, 1796. Vol. 2. – PP. 391–561.
3. Homeopathy // National Health Service [Electronic resource]. – Mode of access: <http://www.nhs.uk/Conditions/homeopathy/Pages/Introduction.aspx#when-used> (Date of access: June 16, 2017).

4. *Locke G.R. 3rd, Pemberton J.H., Phillips S.F.* American Gastroenterological Association Medical Position Statement: guidelines on constipation // *Gastroenterology*, 2000. Vol. 119, Issue 6. – PP. 1761–1766. PMID 11113098. DOI: [10.1053/gast.2000.20390](https://doi.org/10.1053/gast.2000.20390).
5. *MacEoin B.* Homeopathy: The Practical Guide for the 21st Century. – Singapore, 2006. – 288 p. [Electronic resource]. – Mode of access: <https://www.goodreads.com/book/show/968088.Homeopathy> (Date of access: October 18, 2023).
6. *Rajesh S.* Homeopathy in Veterinary Practice, Posted on November 18, 2020 [Electronic resource]. – Mode of access: <https://www.pashudhanpraharee.com/homeopathy-in-veterinary-practice/> (Date of access: October 18, 2023).
7. *Reichenberg-Ullman J., Ullman R.* Dynamic medicine – Acute and chronic prescribing: What's the difference? National Center for Homeopathy [Electronic resource]. – Mode of access: <http://www.homeopathycenter.org/homeopathy-today/dynamic-medicine-acute-and-chronic-prescribing-whats-difference> (Date of access: June 16, 2017).
8. *Risch G.* Homöopathik. Die Lehrmethode Hahnemanns. – München: Pflaum, 1993. – 351 p.
9. *Rossi E., Picchi M., Di Stefano M., Marongiu A.M., Scarsini P.* The homeopathic choice for children: a qualitative research on the decision-making process of the families// *Homeopathy*, 2015. Vol. 104, Issue 3. – PP. 176–181. PMID: 26143450. DOI: [10.1016/j.homp.2015.05.001](https://doi.org/10.1016/j.homp.2015.05.001).
10. *van Haselen R., Thinesse-Mallwitz M., Maidannyk V., Buskin S.L., Weber S., Keller T., Burkart J., Klement P.* The Effectiveness and Safety of a Homeopathic Medicinal Product in Pediatric Upper Respiratory Tract Infections with Fever: A Randomized Controlled Trial // *Global Pediatric Health*, 2016. Vol. 3. – P. 2333794X16654851. PMID: 27493984. PMCID: [PMC4959794](https://pubmed.ncbi.nlm.nih.gov/27493984/). DOI: [10.1177/2333794X16654851](https://doi.org/10.1177/2333794X16654851).
11. *Wald A., Scarpignato C., Mueller-Lissner S., Kamm M.A., Hinkel U., Helfrich I., Schuijt C., Mandel K.G.* A multinational survey of prevalence and patterns of laxative use among adults with self-defined constipation // *Alimentary Pharmacology & Therapeutics*, 2008. Vol. 28, Issue 7. – PP. 917–930. PMID: 18644012. DOI: [10.1111/j.1365-2036.2008.03806.x](https://doi.org/10.1111/j.1365-2036.2008.03806.x).
12. *Walia R., Mahajan L., Steffen R.* Recent advances in chronic constipation // *Current Opinion in Pediatrics*, 2009. Vol. 21, Issue 5. – PP. 661–666. PMID 19606041: DOI: [10.1097/MOP.0b013e32832ff241](https://doi.org/10.1097/MOP.0b013e32832ff241).
13. *Weiermayer P., Frass M., Peinbauer T., Ellinger L.* Evidence-based homeopathy and veterinary homeopathy, and its potential to help overcome the anti-microbial resistance problem – an overview // *Schweizer Archiv für Tierheilkunde*, 2020. Vol. 162, Issue 10. – PP. 597–615. PMID: 33006555. DOI: [10.17236/sat00273](https://doi.org/10.17236/sat00273).
14. *Акашкина Л.В.* Гомеопатия в помощь специалисту: Прил. № 3-2001 к журн. «Новая Аптека» / Л.В. Акашкина, Т.Л. Киселева, О.А. Корвякова. – М.: МЦФЭР, 2001. – 201, [1] с.
15. *Жук Е.А.* Гомеопатия / *Малая медицинская энциклопедия: [в 6 тт.] / Гл. ред. В.И. Покровский.* – М.: Советская энциклопедия, 1991–1996. – Т. 1: А – Грудной ребенок. Т. 1. – 1991. – СС. 549–550.
16. *Киселева Т.Л.* Гомеопатические лекарственные средства, разрешенные к медицинскому применению / Т.Л. Киселева, Т.К. Агеева Е.В. Цветаева. – М.: Велес, 2000. – 218 с.
17. *Кузнецова В.М., Домар Н.А., Зимина М.С.* Запор и его лечение, 29.09.2016 [Электронный ресурс]. – Режим доступа: <https://generalpharmacy.nuph.edu.ua/images/2016/09/29/07> (Дата обращения: 17.11.2023г.).
18. *Мищенко В.С., Патудин А.В., Трубицын А.Г.* Гомеопатия в России. – М.: Валанг, 2006. – 13 с.
19. *Орлов А.Н.* Клиническая биоэтика: Избр. лекции: Учеб. пособие для студентов мед. вузов / А.Н. Орлов. – М.: Медицина, 2003 (ОАО Яросл. полигр. комб.). – 358, [1] с.
20. *Попова Т.Д., Зеликман Т.Я.* Гомеопатическая терапия. – Киев: «Здоровье», 1990. – 240 с.
21. *Проценко Ю.В.* Маркетинговые исследования регионального рынка гомеопатических лекарственных средств на примере Краснодарского края: автореферат дис. ... кандидата фармацевтических наук: 15.00.01 / Проценко Юлия Валентиновна; [Место защиты: Пя-

- тигор. гос. акад. Федер. агентства по здравоохранению и соц. развитию]. – Пятигорск, 2009. – 24 с.
22. *Славич-Приступа А.С.* Формирование аптечного ассортимента // Рос. аптеки, 2007. – № 10(96). – СС. 13–15.
23. Фармацевтическая опека. Помогаем пациенту справиться с распространенными заболеваниями // Информация с сайта «*Аптека online*», 2017 [Электронный ресурс]. – Режим доступа: <https://web.archive.org/web/20170726220057/http://www.apteka.ua/> (Дата обращения: 17.11.2023г.).
24. Фармацевтическая опека: Практик. руководство для провизоров и семейных врачей/ И.А. Зупанец, В.П. Черных, В.Ф. Москаленко и др.; под ред. В.П. Черных, И.А. Зупанца, В.А. Усенко. – Харьков: «Золотые страницы», 2002 – 264 с.
25. Фармацевтический рынок: состояние, тенденции, перспективы // Журнал «Лица бизнеса» [Электронный ресурс] – Режим доступа: https://stepconsulting.ru/en/expert-view/articles/marketing-i-prodazhi-1888892585_e/farmaceuticheskiy-rynok-sostoyanie-tendencii-perspektivy-1870731208_e (Дата обращения: 17.11.2023г.).
26. *Хабриев Р., Вольская Е., Камаев Н.* Опыт международных организаций по формированию этических критериев продвижения лекарственных препаратов // *Remedium*, 1997. – № 9. – СС. 44–45.
27. Хранение и применение гомеопатических препаратов // Клиника классической гомеопатии им. С. Ганемана, 2016. Наука и Искусство Исцеления [Электронный ресурс] – Режим доступа: <https://homeopat-classic.ru/xranenie-i-primeneniye-gomeopaticeskix-preparatov> (Дата обращения: 17.11.2023г.).



© Mailyan A., 2023

© Маилян А.Г., 2023

© Մաիլյան Ա.Գ., 2023

LINK FOR CITATION:

Mailyan A. Comparative Characteristics of the Procedure of the Conversation of the Pharmacy Employee with the Customer of the Pharmacy and the Consultation when Dispensing Allopathic and Homeopathic Medicines (Referential analysis) // «BULLETIN» of the Medical College after Mehrabyan, Scientific & Methodical Journal, No. 15; Editor in Chief: Paronikyan R.; comp.: Nakobyan A. – Yerevan: Meknark, 2023. – PP. 111–128. DOI: [10.53821/1829040X-2023.15-111](https://doi.org/10.53821/1829040X-2023.15-111).

ССЫЛКА ДЛЯ ЦИТИРОВАНИЯ:

Маилян А.Г. Сравнительная характеристика беседы работника аптеки с посетителем аптеки и консультации при отпуске аллопатических и гомеопатических препаратов (Обзор литературы) // «ВЕСТНИК» Медицинского колледжа имени Меграбяна // Научно-методический журнал, № 15 / Глав. ред. Пароникян Р.Г.; сост.: Акопян А.С. – Ереван: Мекнарк, 2023. – СС. 111–128. DOI: [10.53821/1829040X-2023.15-111](https://doi.org/10.53821/1829040X-2023.15-111).

ՄԵԶԲԵՐՄԱՆ ՀՂՈՒՄ՝

Մախլյան Ա.Գ. Դեղատան հաճախորդի հետ դեղատան աշխատակցի գրույցի ընթացակարգի և խորհրդատվության համեմատական բնութագիրը արուպաթային և հոմեոպաթային դեղեր բաց թողնելու դեպքում (Գրականության վերլուծություն) // Մեհրաբյանի անվան բժշկական քոլեջի «ՏԵՂԵԿԱԳԻՐ» // Գիտամեթոդական ամսագիր, № 15 / Գլխ. խմբ.՝ Պարոնիկյան Ռ.Գ., կազմ.՝ Հակոբյան Ա.Ս.: – Երևան՝ «Մեկնարկ», 2023: – ԷԷ. 111–128. DOI: [10.53821/1829040X-2023.15-111](https://doi.org/10.53821/1829040X-2023.15-111).

Информация о статье:

*статья поступила в редакцию 18 ноября 2023 г.,
подписана к печати в номер 15 / 2023 – 15.12.2023 г.*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԵՀՐԱԲՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵԶԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ВЕСТНИК
МЕДИЦИНСКОГО КОЛЛЕДЖА ИМ. МЕГРАБЯНА
REPUBLIC OF ARMENIA
BULLETIN
OF THE MEDICAL COLLEGE AFTER MEHRABYAN

Главный редактор – ПАРОНИКЯН Р.Г.

Составитель, технический редактор, корректор и дизайн – АКОПЯН А.С.

Ответственные за номер – БАБАЯН В.Г., МИКАЕЛЯН А.К., АКОПЯН А.С.



ORCID: 0000-0001-9263-6791

DOI: 10.53821/1829040X

Редакционный совет Вестника просит направлять статьи по адресу:

0012 Երևան, Հր. Քոչարի 21. Հեռ.՝ (+374 10) 26-27-43; (+374 10) 28-95 -54 Վայր՝ www.armmed.am E-mail: med_mehrabyan@rambler.ru	0012 Yerevan 21 Hr. Kochari st. Tel.: (+374 10) 26-27-43; (+374 10) 28-95-54 Website: www.armmed.am E-mail: med_mehrabyan@rambler.ru	0012 Ереван ул. Гр. Кочара 21. Тел: (+374 10) 26-27-43; (+374 10) 28-95-54 Сайт: www.armmed.am E-mail: med_mehrabyan@rambler.ru
--	---	--

Заказ № 15

Подписано к печати 27.12.2023г.

Формат 70x100¹/₁₆ Бумага офсетная № 1.

Объем – 12,75 усл. п. л. Тираж 200 экз.


Отпечатано в типографии:

ООО «МЕКНАРК»

г. Ереван, ул. Абовяна 41.

Тел.: (+374 91) 40-27-97 (моб.), (+374 94) 40-27-97 (моб.)

E-mail: dd1dd@mail.ru



Medical College after Mehrabyan

- Nursing
- Dental Technician
- Midwifery
- Medical Cosmetology
- Pharmacy
- Cosmetics & Art of Cosmetology





LIQVOR[®] *33 Years*
pharmaceuticals

